



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 183

1 ՄԱՐՏ 1915

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Աթոռանիստ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, առաջիկայ Մեծ Պահոց կիրակի օրերուն քարոզները թուրքերէն լեզուով պիտի տրուին նոյն եկեղեցւոյ Մեծաւոր Գեր. Կղեմէս Վ. Աստուրեանի կողմէ, հետեւեալ նիւթերուն վրայ.

Ա. Կիրակի. Անկրօնութիւնն է աղբիւր աշխարհիս վրայ տիրող չարիքներուն:— Անոր պատճառները:

Բ. Կիրակի. Անկրօնութեան հետեւութիւններն ու պատիժները:

Գ. Կիրակի. Անտարբերականութիւնն է երկրորդ աղբիւր աշխարհիս վրայ տիրող չարիքներուն:— Անոր պատճառները:

Դ. Կիրակի. Անտարբերականութիւնը Աստուծոյ դէմ ոճիր մըն է:

Է. Կիրակի. Անտարբերականութիւնը ոճիր մըն է նաեւ ընկերին և նոյն իսկ իր անձին դէմ:

Ծանօթ. — Կիրակի օրերը ժամը 4ին երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի եւ անմիջապէս յետոյ քարոզ պիտի տրուի:

Անոնք որ կը փափաքին Արճազանցի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյմէկ դահեկան զրկելու են:

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀՈՂՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի 40 դահեկանի:
Գաւառներու համար փոսքայի ծախք 10 դահեկան:



ԿԱԹՈՂՈՍԷԱՐԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹ-ԱԹԵՐԹ

Հիմնդրորդ տարի Թ 28 Փետրուար 1915 Թ թիւ 183

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առնագանգ շաբաթերը բա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառոս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարի, ի բարգաւաճան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնատուութեան համար
Սրբազան Հայրն արտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները:»

Նամակ կարգ. Մէր Եւ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թերզեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
* 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնաւարաւ:

ԴԵՊՔՆԵՐ ԵՒ ԱԿՁԻՌՈՒՆՔՆԵՐ

ԶՈՒԿԱԿՇԻՌ ՄԸ

Փետրուար 11ին, Ս. Վարդանանց
տօնին օրը, Ա. Յ. Բոյրեբը իրենց մատ-
րան մէջ բարեբար հիմնադիրնուն՝ եր-
ջանկայիշատակ Հասուն Կարգինալի հա-
մար ձայնաւոր պատարագ եւ հոգե-
հանգստեան պաշտօն կատարել տուին:

Դարերը որքան հեռի ըլլան՝ սկըզ-
բունքի նոյնութիւնը եւ նկարագրի ուղ-
ղութիւնը դիւրաւ իրարու կը զուգա-
դրեն պատմական մարդիկ:

Տխրանուշ յիշատակը Աւարայրի դաշ-

տին վրայ փռուած բիւրաւոր քաջերու,
անոնցմէ քիչ հեռի պաշտօնի հայրա-
պետներու վկայական արիւնը, որ խառ-
նուելով առաջիններու արեան՝ մահուան
ատենն ալ արենակցութիւննին կ'անմա-
հացնէ, կը պատկերացնեն մեզ այն վե-
հագուններու դասակարգը որ ըսին. Սուր
թո եւ պարանոց մեր (Եղիշէ):

Ի՞նչ բանի համար տուած էին այդ
վերջնադիրը մեր նախնիք, եւ հաւատա-
րիմ խօսքերնուն, կնքեցին զայն յետոյ
իրենց արիւնով: Հռոմայ եպիսկոպոսա-
պետէն ստացուած հաւատքը վտանգի
մէջ էր. Թշնամի ձեռքեր զայն կորզելու
կը սպառնային: Այս սպառնական վտան-
գին դէմ թուաք դրուելու էր, վկայա-

կան պարանոցներ արեամբ շաղուելով կանգնեցին այդ թումբը. Սուր ֆո եւ պարանոց մեր:

Պահելով համեմատութիւնը զուգադրենք Հասունի յիշատակը այդ դիւցազուններու քով, այն ատեն որոշ պիտի տեսնենք անոր ճշմարիտ դէմքն ու նկարագիրը:

* *

Ս. Աթանաս, 46 տարուան եպիսկոպոսութեան միջոցին 5 անգամ աթոռնկեց եղաւ Արիոսականներէ և 20 տարի աքսորի մէջ անցուց. այդ արարքը արդարացնելու համար հակառակորդը շատ մը զրպարտութիւններ յերիւեցին. այդ զրպարտութիւններն անցան դացին և մնաց այս միայն՝ որ ինքն ախոյեան մը եղած էր Արիոսականութեան աղանդին դէմ, զոր իր մահուամբ թաղեց:

Մարդիկ կան զորս Աստուած կոչած է ախոյեան ըլլալու իր եկեղեցւոյ մէջ և սիւն ամբողջութեան. Առաքից զնա սիւն քաճարի Աստուծոյ (Յայտ. Գ. 12): Սամսոնի սիւններն են որ մեռնելու ալ ըլլան կը թաղեն փղշտացիական աղանդներ: Հասուն անոնցմէ եղաւ, որ կուրծք տուին աղանդներու: Իրեն դիմաց ալ կար աղանդ մը, որ ճշմարտապէս աղանդ մըն էր հակառակ ամէն ողորդական անուանումներու:

Այդ աղանդը ունէր ինչպէս իր պատմութիւնը նոյնպէս իր փիլիսոփայութիւնը, չէր կրնար տարբեր ըլլալ Մարդկային գործերը մտքէ կը մեկնին կամ անոր կը կռթնին՝ թէեւ կիրքը, թիւրիմայութիւնը, շահախնդրութիւնը ազդեն անոնց վրայ. արդիւնք չի տրուիր առանց համեմատական պատճառի: Ան-

հատական գործերը եթէ մարդկային են՝ մտքէ և սկզբունքէ կը մեկնին. երբ գործերու համընթացութիւն կայ, անպատճառ մտքերու համաձայնութիւն կայ, և սկզբունքներու միադէտ դրութիւնը, երբ ծուռ ըլլայ և մոլորական, աղանդ կ'ըսուի:

Ինչ էր այդ աղանդը. Հռոմայ Գահանայապետին գերիշխանութեան ուրացումն էր, որ այլուր Anglicanisme, Gallicanisme, vieux catholicisme ըսուեցաւ, ու մեր մէջ հակահիշուեցաւ Հասունի անուամբ, վասն զի նա եղաւ դիմադրողներու պարագլուխը, ինչպէս երբեմն Ղիւնդիոս իր վկայակիցներուն, որ Ղիւնդեանք կ'ըսուին ցայսօր:

Ներկայացաւ օր մը հակառակորդ պարագլուխներէն մին և խնդրեց որ մէկդի քաջուի ինք կուրծք տալէ իրենց շարժումին դէմ, որպէս զի հարուածնին տեղը առնուր: Ժիշդ ատոր համար տեղս կենալու եմ, ըսաւ: Ներկայացաւ ուրիշ մը իր մտերիմներէն և, մէջտեղ հանէ, ըսաւ տեղեկագիրդ ի Հռոմ, որպէս զի ամէն ոք տեսնէ թէ ամէն հրաման ուղղակի իր աղբիւրէն կը բղխի: Տղայա՛միս, պատասխանեց մեծ մարդը, թո՛ղ իմ վրաս հանգչի ազգին ատելութիւնը, որպէս զի ինձի հետ մահկանացու ըլլայ: Երկու պարագլուխն ալ Սուր ֆո եւ պարանոց մերի պատասխանն էր, որուն վրայ մնաց անսասան մինչեւ վերջը:

Հռոմայ Ս. Գահուն անպայման յարումը. ահա՛ իր յանցանքը. յանցանք մը որ մեծ սուրբերու յանցանքը եղած է սկսելով մեր Լուսաւորչէն, որ նոյն Գահաբամբ եպիսկոպոսապետէն առած էր այն հաւատքը զոր յետոյ իր սիրելի որդիքը պաշտպանելու համար Վարդանեան-

ներէ ու Ղեւոնդեաններէ մինչեւ Հասուն պիտի կրկնէին ամէն հակառակամարտ շարժումի առջեւ սուր ֆո եւ պարսկոց մեր:

Լեւոն ԺԻ. դրուատեց ու սահմանեց այդ սէրն ու յարումը առ Ս. Գահն լատին լեզուի կորովի բացատրութեամբ մը՝ իբր սիրոյ բուռն մղում մը: Ժամանակը պիտի թօթուէ թօթափէ ամէն զրպարտութիւնները անոր դէմ և պիտի երեւան դայ Հասունի գէմքը իր պատուանդանին վրայ, կաթողիկէ սկզբանց արաստոյ հիմնաքարին վրայ, Բարի անուն մնայ յստիսեան:

* *

Աստուած ալ զինքը ցուցադրեց արդէն ու պատկերացուց մեծ: Աբրահամ Պետրոս Ա. էն վերջը զինքը կը տեսնենք պալիումը առնելու համար յոտս Ս. Բաւ հանայապետի և անոր զրկախառնուած. ահա զինքը յատկանշող հպատակութիւնը ու յարումը Ս. Աթոռին: Ասդին փոխարէն իր այդ յարումին ահա տիրուհի մը առջեւը ծնրադրած, ահա՛ հոգեւոր իշխանութեան բարձրութիւնը: Հարկ եղաւ որ ատեն մը բացակայէր Աթոռէն և ասով ինքը Աթանասներու, Ոսկեբերաններու, Իգնատիոսներու, Սահակներու կարգը անցաւ:

Կարգինալութիւնը վերջնական փառումն եղաւ Հռոմայ Ս. Գահուն, որուն մէջ ալ Ս. Պետրոսի շիրմին մօտ հանգեաւ ի Տէր և ունի իր գերեզմանը: Ոսկեբերանի նախանձորդ մը եղաւ ասոր մէջ ալ:

Իր կառավարութեան ուղի որ վերջապէս գնահատեց իր հաւատարմութիւնը, մեծամեծ ծառայութիւններ մա-

տոյց նոյն իսկ փափուկ նուիրակութիւններով:

Իսկ Հասարակութիւնը, որմէ հակառակորդներն ալ ճանչցած էին թէ իրենք խօսիլ, իսկ Հասուն գործել դիտէր, ցայսօր կը վայլէ անոր անյիշաչար բարեացակամութիւնը և համբերատար գործունէութեան մնայուն մեծագործութիւնները: Անարատ Յղութեան Կուսանաց հաստատութիւնն ի Պոլիս, Լեւոնեան վարժարանինը ի Հռոմ երկու կոթողներ պիտի մնան իր ճշմարիտ ազգասիրութեան:

* *

Այն դասակարգը միայն, որ Վարդան Մամիկոնեանը կրօնամոլ ազգակործան մը նկատեց և յեղաշրջելով պատմական ու ազգային աւանդութեան բողոքը՝ զմասնից Վասակ ազգայէն դիւանագէտ մը հռչակեց, այն դասակարգը միայն չի կրցաւ Հասունը գնահատել: Ահա չափը խնդիրը չափելու:

Ազգը սիրել, զայն վերականգնել, ամէն հանդիպած շարժումի հոսանքին խառնուիլ ըսել չէ: Հարկ է նախ սկզբունքներ դնել, որ ժողովին ու չցրուեն, որ կարենան հիմ ըլլալ վերականգնումի, ո՛չ աւազուտ՝ այլ արաստոյ ապառաժ: Ով որ այսպէս չի շինել՝ կը քանդէ:

Այդ սկզբունքներու հաւատարմութիւնը նկարագիր կ'ըսուի: Եւ անշուշտ նկարագիրը պէտք է կազմել ազգի մը բարոյականը բարձրացնելու համար և նկարագիր ըսուածը հոգեկան որոշ ու ինքնիրեն համընթաց ցուքն է, որ կարծէք մարմնէն ալ դուրս կը ցայտէ ու կը պատկերացնէ սկզբունքի մարդը:

Ահա Հասունի բնորոշ յատկութիւնը. նկարագրի տէր մնալ առանց հակասելու, որով կու գար մեր մէջ երկարելու շարքը այն վեհազուններու որ բերնէ բերան կրկնեցին միշտ Սուր քո եւ սրահանոց մեր:

Ո՛րքան հրահանգիչ է Ձուգակչիւնը Ն.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ

ՍԻՒՆ ՀՈԴՈՍ

Մեր վերջին յօդուածով¹ ի վեր հանեցինք 1911ին ի Հոռոմ գումարուած և Ս. Աթոռէն հաստատուած մեր Ազգային Պատրիարքական Սիւնհոգոսին կարեւորութիւնը և թանկագին հանգամանքը, իբր հաստատուն Օրինագիրք մը և Կանոն առնելիաց, որ միօրինակ կը կապէ առաջնորդներն ու հպատակները, կը սահմանէ հրամայողաց միանգամայն և հնազանդելոց պարտականութիւններն ու իրաւունքները:

Արդ յայտնի է թէ իւրաքանչիւր Հայ Կաթողիկէ անհատ պէտք է ընդունի զայն ըստ անոր կարեւորութեան, և ոչ միայն կղերն, որ խորապէս և բառացի պէտք է ուսումնասիրէ զայն, այլ նաև աշխարհիկ անձինք կը պարտին գոնէ հակիրճ ծանօթութիւն մը ունենալ անոր վրայ, և անոր բովանդակութեանը ծանօթանալ:

Հարկ անհրաժեշտ է ուրեմն Սիւնհոգոսին գործերն ու վճիռները մեկնաբանել, անոր իմաստը դիւրացնել, պարզել, համառօտել, միով բանիւ, ժողովրդականացնել. այս պարտքը ու հոգը կը ստանձնէ մեր թերթը:

Մտադրած ենք հետեւեալքար մասնաւոր յօդուածներ նուիրել այսքան կարեւոր և օգտակար ձեռնարկի մը, ի ծառայութիւն մեր ընթերցողաց: Հոս սակայն չենք ուզեր բնականաբար կրկնել Սիւնհոգոսին պատմական մասը, որ լիապէս բովանդակուած է Կ. Արձապանգ թերթիս Ա. տարուան այլեւայլ թի-

ւերուն մէջ, սկսելով 13 թիւէն էջ 143. Մեր ուսումնասիրութեան միակ առարկան պիտի ըլլայ Սիւնհոգոսի գործոց ու վճռոց վերջին անգամ հրատարակուած հատորը:

Անմիջապէս կը սկսինք:

Սիւնհոգական հատորը երեք մասերու բաժնուած է.

Ա. Վաւերագիրք և Գործք Սիւնհոգոսի.

Բ. Վճիռք Սիւնհոգոսի.

Գ. Յաւելուած:

Առաջին մասը, ինչպէս կը տեսնուի, երկու բաժանումներ ունի, մին կը պարունակէ այն կարեւոր և գլխաւոր վաւերաթուղթերը (documents) որոնք մերձաւոր առնչութիւն ունին Սիւնհոգոսին հետ. իսկ միւսը՝ կը բովանդակէ ժողովներու ու նիստերու գումարումները:

Ասոնց ամէնուն գլուխը կը գտնուի Սիւնհոգոսի Ս. Գահէն հաստատութեան վճիռը, որ իբր փառաւոր նախադուռ, կը բանայ Սիւնհոգոսը, վաւերացնելով և նուիրագործելով զայն, Յիսուսի Բրիստոսի Փոխանորդին հաւանութեամբ:

Բանդի «Աստուած մէկ է և Բրիստոս մէկ և Եկեղեցի մէկ և Աթոռը մէկ, որ Տիրոջ ձայնով Պատրոսի վրայ հաստատուեցաւ... ով որ այլուր կը ժողվէ, կը ցրուէ» (Ս. Կիրոյր). «Եթէ մէկը Նոյի ապականի մէջ չէ. պիտի կորսուի ջրհեղեղին մէջ» (Յերոն). — «Հոռոմայ Առաքելական Աթոռէն վճիռն եկաւ. և դատը աւարտեցաւ» (Ս. Օգ.). — «Քահանայապետին նամակն եկաւ, այս խնդրոյն վրայ ամէն տարակոյս փարատեցաւ» (Նոյն):

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՎՃԻՐԸ՝ (ի 14 Սեպտ. 1913), 1. Կը յիշէ Ս. Բաճանայապետին՝ Պիոսի Ժ. ի Հայոց Եկեղեցւոյն վրայ տաժած հայրական խնամքը, որով հաճեցաւ՝ ա) հոգալ անոր բարիքը՝ հաւատքի ու վարչութեան մէջ. ք) ամէն բան նորոգել ի Բրիստոս՝ իր սիրելի հայ զաւակներուն մէջ. և և այս վախճաններուս համար 1911. Օգոստ. 30ին, իր թղթովը հրամայեց գումարել Սիւնհոգոսը: — 2. Այս Սիւնհոգոսը ազգային է,

¹ Տես Կ. Արձ. Ե. տարի, թիւ 181, էջ 17:

որովհետեւ գումարուած ազգային օրինաւոր Նուիրապետութիւնը իր պատրիարքի ճոխութեամբ յիստորիաւոր է, որովհետեւ անոր հրաւիրուած են նաեւ այն Հայ Կաթողիկէ եպիսկոպոսներ, որոնք չեն գտնուիր ուղղակի ընդ իրաւասութեամբ Կ. Պատրիարքին և որոնց, այս անգամուան համար, որոշողական ձայն արուած է: — 3. Գրեթէ ամէն հայածէս հովիւներ այս քահանայապետական ձայնին աւազարեցին հպատակիլ և եկան ի Հռոմ ու Ք. Հայ դպրոցին Ս. Նիկող. Տօլենտինեան եկեղեցւոյն մէջ գումարեցան ի Սիւնհոգոս, որ բացուեցաւ 1911, Հոկտ. 15ին, և փակուեցաւ նոյն տարուան Դեկտ. 1ին: — 4. Սիւնհոգական Հարք իրենց Գործերն ու Վճիռները Ս. Գահուն զատաստանին հնթարկեցին: — 5. Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյն Վսեմ. Կարգիւնաւորը այն Գործերն ու Վճիռները քաջ կշռեցին, քննեցին և սրբազրեցին: — 6. Ապա իրենց հաւանութիւնը յայտնեցին անոնց, և յայտարարեցին թէ այլ եւս հրաման է զանոնք տպագրութեամբ ի լոյս բնծայել: 7 — Այս որոշողութիւնը նոյն Ս. Ժողովոյ Քարտուղարին միջոցաւ, ինչպէս սովորութիւն է, ներկայացուեցաւ Ս. Քահանայապետին. և նա հաստատեց ու վաւերացուց այդ վճիռը. 1913 Յունիս 20ին:

Հստ այսմ, Սիւնհոգոսին լատիներէն բնագիրը անմիջապէս տպուեցաւ ի Հռոմ, վատիկանեան տպարանին մէջ, իսկ հայերէն բնագիրը՝ ի Կ. Պոլիս, Կ. Արճազանգ տպարանին մէջ:

1. ՎԱԽԵՐԱԳԻՐՔ:

Ա. Թուղթ Ս. Քահանայապետին Պիոսի Ժ. ի որով կը հրամայէ Սիւնհոգոսը ի Հռոմ գումարել, Տրուած է 1911 Օգոստ. 30ին և ուղղուած առ Ասեմ. Պօղոս Պետրոս Ժ. Պատրիարք:

Պիոս Ժ. կը թուարկէ նախ՝ քանի մը Քահանայապետաց անունները, որոնք խանդակաթ սիրով վերաբերուեցան զէպի Հայերը. կը յիշատակէ անոնց ինչ ինչ շնորհները, առատաձեռնութիւնները, նիւթական ու բարոյական օգնութիւնները: Անոնց մէջ կը գե-

րազանցեն մանաւանդ Բենեդիկտոս Ժ. , Պիոս Ը. , Լեւոն Ժ. , որոնք ամենէն հոյակապ պործն է այն փառաւոր կղերանոցը, զոր հաստատեց ի Հռոմ Հայոց համար, նախաձեռնութեամբ ոչ երբեք ըստ բաւականի ողբացեալ Մեծ մարդուն և սրբակենցաղ Հովնիս, Հասուն Պատրիարքին և Կարգիւնաւորին: Իսկ ինքը Պիոս Ժ. իրաւցնէ ոչինչ զանցըրած է այն բաներէն որոնք հայ ազգին հոգեւորական օգտին և զարգացման կը սատարէին:

Իսկ հիմա, երկպառակութիւններն ու վէճերը զացրեցնելու, եկեղեցական բարեկարգութիւնը ամրացնելու, մեր օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւնները հաստատելու, կղերին և աշխարհականաց պարտքերը սահմանելու համար, կը հրամայէ գումարել Ազգ. Սիւնհոգոսը, և կը սահմանէ որ ա) անոր նախագահէ Ասեմ. Պատրիարքը: Բ) նոյն ինքն Պատրիարքը փութով կոչէ զՍիւնհոգոս. Գ) այդ Սիւնհոգոսը՝ առ սլաւաճառութեան, ի Հռոմ գումարուի:

Յետոյ Գերագոյն Հովուապետը կը թուարկէ նաեւ Սիւնհոգոսի մէջ ձեռք առնելիք նիւթերը, և յոյս կը յայտնէ թէ, ինչպէս ուրիշ ազգաց նոյնպէս և մեզի համար մեծապէս արդիւնաւոր պիտի ըլլայ սինոդական Օրինացքի մը հրատարակութիւնը:

Ապա քաղցր մաղթանքներով և Առաքելական Օրհնութեամբ կը կնքէ այս գեղեցիկ, մխիթարական և յաւէտ անմոռանալի յիշատակարանը:

Բ. Թուղթ կոչման և գումարման ի Սիւնհոգոս, Ասեմ. Պօղոս Պետրոս Ժ. Թէրզեան Պատրիարքի:

Իբրեւ Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան պառլի, Պատրիարքը յիշուանց կը կոչէ ի Սիւնհոգոս իր ամէն վիճակակից Սրբեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները, որոնք ըստ զօրութեան իրենց հետզանդութեան հրաւիրեն, զոր իրենց եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ տուին նոյն Պատրիարքի կամ անոր նախորդաց ձեռքը, ի խղճէ պարտական են գալու ի Սիւնհոգոս. ցոյց տրուած ժամանակին ու անգըր: Իսկ եթէ

արդար և ծանր արգելքներու պատճառաւ ան-
կարելի ըլլայ վիճակաւորաց մէկուն կամ ո-
մանց ներկայութիւնը, ասոնք իրենց անձը
ներկայացնելու համար փոխանորդ մը կը
կարգեն՝ կամ ներկայ եպիսկոպոսներէն մին,
և կամ ուրիշ քահանայ մը, որոնց մասին
կ'օրէնսդրէ ներկայ Սիւնհ. Տիտղ. Բ. Գլ.
Ե. Թիւ 227, 228 էջ 166, և Տար. Հաւ.
Ս. Ժողովոյն Գահերէց Կարգինալը, առան-
ձինն առ այս գրուած նամակով, 1911 Նոյ.
1ին, կը յայտարարէ որ, թէեւ Պատրիարքի
կամ վիճակաւոր եպիսկոպոսի ընտրութեան
Սիւնհոգոսներուն մէջ բացակայ եպիսկոպոս-
ները իրաւունք չունին փոխանորդ կարգել,
սակայն Օրէնսդրական Սիւնհոգոսներուն մէջ
ոչ միայն կրնան այլ եւ շատ պատշաճ է որ
կարգեն (Տես Յաւել, Ը. էջ 631—2)։ —
Իսկ այս Շրջաբերականը կը չեղատէ նաեւ թէ,
ներկայ Սիւնհոգոսը միայն գաղաւթոր պիտի
ըլլայ բացակայից արգելքներուն օրինաւո-
րութեան և նշանակուած փոխանորդներուն
յարմարութեանը։ Կը զգացնէ կրկին թէ Ե-
պիսկոպոսունք պէտք չէ թեթեւօրէն իրենք
զիրենք զերծ կաղուցանեն ներկայութենէն,
քանզի ամենակարեւոր գործ մըն է որ պիտի
կատարուի բովանդակ հասարակութեանս հա-
մար, որ զուրկ էր մինչեւ հիմա Օրէնքէ եւ
առնելիաց Կանոնէն, որով և կը պակսէր բա-
րեկարգութիւն և միաձեւութիւն, ու եկե-
ղեցական իրաւունք և իշխանութիւնը կո-
խան կ'ըլլային աշխարհական յաւակնոտ ծայ-
րայեղ ոտնձգութեան։

Ամեն. Պատրիարքը Սիւնհոգոսը կը կոչէ
Ս. Հօր բարեացակամ արտօնութեամբ, ի
Հռոմ, 1911 Հոկտ. 15ին գումարուելու հա-
մար։

Պատշաճաւոր մաղթանքներ կը փակեն
Թուղթը, որ կը կրէ 31 Յոգոստ. 1911ի Թուա-
կանը։

Արժանի է զիտելու թէ Շրջաբերականն է
«Տուեալ արտաքոյ Իրան Սրբոյն Պաւղոսի»։
Ինչո՞ւ, որովհետեւ ոչ ոք, բացի Բաճանա-
յապետէն, իշխանութիւն չունի ի Հռոմ ֆա-
ղափս պաշտօնական Շրջաբերական մը գրել,
որչափ ալ արտօնուած ըլլայ Սինոդը ի Հռոմ

գումարելու. իր իշխանութիւնը ըստ իմիք
միշտ սեղմեալ կը մնայ, որով կը պարտա-
ւորի արտաքոյ Հռոմայ սալ իր վաւերացիրը։

Գ. Շրջաբերական առ կղերն եւ ժողովուրդ.
Միեւնոյն գաղափարները կ'ընդլայնուին նաեւ
այս Թղթոյ մէջ, մանաւանդ կը շեշտուին
Սիւնհոգոսին ի Հռոմ գումարուելուն արտա-
քոյ կարգի կարեւորութիւնը, մեր Հասարա-
կութեան բազմադիմի պէտքերը որ անհրա-
ժեշտ կը դարձնեն այս բարձր ձեռնարկը, ա-
նոր համար մասնաւոր աղօթքներ կը հրա-
մայուին։ Եւ արդէն այս Թղթոյ բնագիրը,
ըստ բերելոյ հարկի, աշխարհաբար ըլլալուն,
ամէնուն ալ մատչելի և դիւրահասկնալի է,
որով զանց կ'ընենք անդրապոյն խուզարկու-
թիւնը։

Թուականն է 8 Սեպտ. 1911.

Դ. Ճառ Ամեն. Պատրիարքին։ Ամէն Ժո-
ղովներու մէջ առ հասարակ սովորու-
թիւն է որ Նախագահը բացման ճառ մը ար-
տասանէ, ամփոփելով Սիւնհոգոսին նիւթը
և խրախուսելով ի գործ։

Արդ, ներկայ ճառն ալ այս տեսակ է։
Անոր մէջ գոհութիւն կը մատուցուի Աստու-
ծոյ՝ այս մեծ շնորքին համար, և շնորհաւո-
րութիւններ կ'ուղղուին ներկայ Հարց, ցաւ
յայտնելով թէ ներկայ արգելքներ պատճառ
եղան որ Սինոդականներէ ոմանք չի կրցան
հասնիլ¹։ Իսկ Արքազան Բաճանայապետը,
Հարց Թիւը լրացնելու համար, Թափուր Վի-
ճակաց եպիսկոպոսներ կարգեց, որոնք Կ. Պ.
Փոխանորդին հետ ի միասին տասնեակ թիւ
կը կազմեն։

Յետ բարի գալստեան մաղթանաց, գոր-
ծառնութեանց յաջող ելքին համար հաստա-
տուն է յոյսը՝ Յիսուսի Բրիստոսի Տեսնն մե-
րոյ անսուտ խոստման վրայ, որ իր անուամբ
գումարուողներուն մէջ պիտի գտնուին ներ-
կայ, զօդ միութեան Բրիստոս է։ Անոր հօր
օգնականութեամբ պիտի կարենան Սիւն-
դականք կատարել մեր Եկեղեցւոյն վերանո-

¹ Սակայն բացակայից շատերը ի վերջոյ հա-
սան, ինչպէս քիչ վերջը ներկայից քանկին մէջ կը
տեսնուի (էջ ԾԵ)։

րողութեան գործը, որուն համար ջերմաջերմ աղօթք պիտի հրաւիրեն Երկնից պթութիւնը: Յաջողութեան ուրիշ առհաւատչեան է Ս. Հօր՝ Քրիստոսի Փոխանորդին Առաքելական Կոչն ու Օրհնութիւնը:

Այսպէս ահա պիտի փայլի Նուիրապետութեան անկեալ արժանաւորութիւնը, պիտի վերակենդանանայ բարեկարգութիւնը կրօնին մէջ՝ որուն յոյժ կարօտ է նա, Կաթողիկէութեան ողին պիտի արծարծի կրկին ժողովներուն մէջ, խլուելով անոր մէջէն այն նորածիլ աւաղելի մոլորութիւնները, որոնց մանաւանդ արմատն է ժողովրդական իշխանապետութեան ամբարտաւան կարծիքը:

Այսքան բարիք պիտի կարենան ձեռք բերուիլ Աստուծոյ աննկալ օգնականութեամբ և մանաւանդ բարեխօսութեամբ երանելեաց. և ի մանաւորի սքանչելագործ Ս. Նիկողայոսի Տղենտինացոյ, որոյ սնունդն նուիրուած է այդ եկեղեցին, զոր Ա. Քահանայապետք սահմանեցին հայ ծիսի պաշտամանց: Եւգենիոս Դ. Քահանայապետը զինքը Սրբոց կարգը զատեց, և հերձուածողներու և հերետիկոսներու զէմ պաշտպան Եկեղեցոյ հռչակեց, և Հայոց՝ Փլորենտեան ժողովոյն մէջ Հռոմայ Եկեղեցւոյն հետ միութիւնը անոր բարեխօսութեան արդեանցը վերագրեց, որով նա կրկին իրաւամբ մանաւոր պաշտպան մըն է նաեւ ներկայ Սրենհոլդսին:

Մեր Եկեղեցւոյն կեանքը կախում ունի Ս. Պետրոսի Դահլուն հետ սերտ միութենէն, արմէ միայն է անխալ վարդապետութիւն. ուրեմն իբր հարազատ որդիք մեր սիրելի Հօր Ս. Դրիգորի Լուսաւորչի, մենք ալ, այս մասին, անոր շաւիղներուն վրայէն պիտի քալենք. զի նա վերապատեցաւ ի Ս. Դանիէն Հռոմայ, ուր եղին զիսն հաւատոյ հիման Ս. Եկեղեցւոյ:

Առ այս պէտք է ուզողին Սինդգական Հարց բոլոր ջանքերը:

ՊԻՈՍԺ. (*)

Մանդովայէն Վենետիկ փոխադրուիլը բնաւ բան մը չիօխեց՝ հոգւոց փրկութեան համար իր ունեցած անխնջ և անխորտակելի եռանդէն. անոնց կարգաւոր և հայրական վարչութեան համար իր ունեցած գուրգուրալից խնամքէն: Դրեթէ տմէն օր կը վազէր իր հովուական պաշտաման պարտքերը ճշգիւ կատարելու. ամէն օր կ'երթար դրոշմ տալու, նոյն իսկ երբեմն առանձնականաց տնեւորուն մէջ: Հոգի մը փրկելու համար կազմ և պատրաստ էր ամէն տեսակ զոհողութիւն քնելու, ինչպէս ըրաւ հազարապետ Թրանիի, որուն դնաց այցելելու՝ հակառակ ամէն արգելքներու և վտանգներու, տանելու համար անոր մեր սուրբ Կրօնքին միախառնութիւնները:

Իր ունիւնդութեան ժամերը պարտաւոր տեղը նշանակած էր, որովհետեւ տմաղջ Վենետիկ տմաղջ օրը կը վազէր անոր քով իր խորհուրդը առնելու համար, և մարդկութեան այն մեծ բարեկամը կ'ընդունէր իր հօտը միօրինակ բարութեամբ ու համբարութեամբ:

Վենետիկի պատրիարքական աթոռին վրայ ամենէն աւելի իր լուսամբու եռանդեան բարիքը վայելողներն եղան կղերիկոսունք: Եւ ոչ նուազ աշխատութիւն նուիրեց հայրախնամ պատրիարքը, որպէս զի հոգ հոգւոյ ունեցող քահանայից մէջ անթերի պահպանուի գիտնական ու եկեղեցական ոգին: Դրեթէ սարսափելի խտութեամբ կը հսկէր իր կղերին վարուց ու բարեկարգութեան վրայ: Եւ ժամու և ի տարածամաս, ինչպէս կը գրէ 1897ին Հռոմ զրկած տեղեկագրին մէջ, կը յորդորէր նա իր ժողովրդապետները՝ ամենափոյթ խնամքով կատարելու իրենց քարոզութեան և հրահանգներու պարտականութիւնը: Այս վախճանու երկու տնդամ հովուական այցելութիւն կատարեց և մանաւորապէս գումարեց նաեւ թեմական Սրենհոլդս մը, 1898ին:

Եւ այսպէս ապահովուած ու դորայած

(*) ՏԿ՝ ԹԻՒ 176, էջ 777:

ներքնապէս, կրնար իր եկեղեցին հօրեղապէս եւ մեծ յաջողութեամբ դիմագրաւել արտաքին պայքարներու:

Իր ամենէն փառաւոր յաղթութիւնները եղան վարչական ընտրութիւնները: Արդէն կառավարութեան հետ իր մշակած յարաբերութիւնները միշտ քաղաքավարական եւ սիրալիր եղած են. ասանկով բոլոր պաշտօնեաներու համակրութիւնը շահեցաւ, զոր եւ միշտ ի բարին գործածեց Ս. Եկեղեցւոյ իրաւանց եւ իր հօտին: Իսկ հակակրօն ընկերութիւններն էին որոնց վրայ յաղթանակ տանել պէտք էր. անոնք էին որ կանոնաւոր եւ հոգեկու մտքառումներով կ'աշխատէին տապալել կաթողիկէ կողմն ու սկզբունքները: Անոնց դէմ ուրեմն դարձուց նա իր բոլոր ուշադրութիւնը ու հռանդուն գործունէութիւնը. ստիպուեցան անոնք պարսութիւն խոստովանիլ՝ իր խոհմ, չրջահայեաց եւ ոչ զոք անձնապէս վշտացնող գործունէութեան առջեւ: Մինչեւ իսկ Թրիպուլնա թերթը կը ստիպուէր խոստովանելու. «Կարդինալ Սարգօ պատրիարքը առաջնակարգ դիւանագէտ մըն է, որ գիտցաւ Վենետիկի մէջ սքանչելապէս կազմակերպել կղերական կուսակցութիւնը եւ անոր միջոցով ախրել թաղապետութեան, հասարակաց կեանքին, բովանդակ քաղաքին վրայ»:

Այն ամէն բան որ կրնար արթնցնել կաթողիկէ կեանքը, անոր անձին մէջ կը գտնէր կամակատար օգնական մը: Վենետիկի Տիֆեզա կաթողիկէ թերթը ապացոյց մըն է այն եռանդին որով Սարգօ յառաջ մղեց օրագրութիւնը: Վայրկեան մը եղաւ յորում Տիֆեզա վտանգի մէջ էր անհետանալու. ան ատեն կորովի կարդինալը խրոխտաբար յայտարարեց. «Ամէն գնով պէտք է որ թերթը շարունակէ. եւ եթէ պէտք ըլլայ, պատրաստ եմ զայն փրկելու համար ծախելու իմ ծիրանիս ու մատանիս անգամ»:

Նուազ հոգատարութեամբ չէ որ Սարգօ զբաղեցաւ իր հօտին ընկերական հարցերով: Իր հովանւոյն ներքեւ է որ Վենետիկի կաթողիկէները հիմնեցին Սոն Մարքօ հաստատուն դրամատունը, 17 միլիոն ֆրանքով:

Ո՛չ միայն խորապէս ուսումնասիրեց ընկերական խնդիրը, այլ եւ ի գործ գրաւ զայն ըստ քրիստոնէական սկզբանց, ամենէն առաջ ցոյց տալով՝ նաեւ հոս, մասնաւոր նախասիրութիւն մը աղքատ դասակարգին համար, որմէ ելած էր նաեւ ինքը, ըլլա՛յ իր անձնական առատաձեռնութիւններով, ըլլա՛յ վերակենդանացելով քրիստոնէութեան սիրոյ գործերը. ապա նաեւ հիմնելով, նպաստելով եւ ընդարձակելով ոչ միայն բազմաթիւ ընկերութիւններ, միաբանութիւններ եւ երիտասարդներու համախմբումներ ու ակումբներ, այլ մասնաւոր ընկերական կազմակերպութիւններ, եւ յրնդհանուրի՝ այն ամէն ձեռնարկները, որոնք նպատակ ունին բարեւոյք վարի դասակարգերու կեանքի պայմանները:

Այս գորաւոր միջոցով եղաւ որ այս բոլոր դասակարգները իրեն շահեցաւ եւ անոնց օգնականութեամբ պարտութեան մատնեց գորաւոր դիւանագիտութիւնը հակակղերականաց, ծայրագոյն ազատականաց եւ ֆարմասոններու: Երբ 1903ի յաղթութենէն վերջը իր բարեկամները պատրիարքական պալատին հրապարակին վրայ ցնծալից ցոյց մը ըրին իրեն, հաղարաւոր ժողովուրդ միաձայն կ'աղաղակէին. «Կեցցէ՛ մակուկավարներու պատրիարքը»:

Վերջին ժամանակներու մէջ իտալացի կաթողիկէից ամենաչքեղ ձեռնարկներէն մին, «Կաթողիկէ Համաժողով ընկերական ուսմանց», որ զումարեցաւ ի Բատուա, 1896 Օգոստ.ին մէջ, 18 կարդինալներու, 18 արքեպիսկոսներու եւ 40 եպիսկոսներու ներկայութեամբ եւ կարգ Սարգոյի նախագահութեամբ իր նախաձեռնութեամբ կազմուած էր:

Վենետիկի պատրիարքութեան մէջ անցուցած ինը տարիները համակ լի եղան սիրոյ եւ իմաստութեան մեծամեծ գործերով: Վենետիկեան ժողովուրդը յաւէտ պիտի յիշէ իր մեծ դէմքը՝ բարի ու բարեպաշտ, իր կեանքը՝ հիւսուած բանաստեղծութեամբ ու արցունքներով, իր տքնական հոկողութիւնը հասարակաց եւ առանձնական դժբախտութեանց մէջ. իր անխոնջ գործունէութիւնը:

կաթողիկէ աղղեցութեան, ժողովրդապետութեանց եղբայրակցութիւններուն, օրագրութեան, բարեսիրական հաստատութեանց համար, իր կեանքը վերջապէս՝ պարզ, համեստ եւ մահացեալ:

(Շարունակելի)

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Աշխարհի յաճախադէպ աղէտներէն մին է երկրաշարժը, որ գետինը կ'երերցնէ մերթ վերամուղ բախիւններով, մերթ կողահար ցնցումներով և մերթ կոհակաձեւ շարժումներով, որոնցմէ երկիրը ալէկոծ ծովու մը պէս կը տատանի: Այս տեսակ տեսակ ցնցումները երբեմն միանգամայն տեղի կ'ունենան և սոսկալի աւերներ կը գործեն, ինչպէս եղաւ դեռ վերջերս, յունուար 23ին Իտալիոյ մէջ, ուր գրեթէ 150 հազարամէղր տարածութեամբ երկրամաս մը տակն ու վրայ եղաւ, քաղաքներ եւ գիւղեր, յատկապէս Աւվէցցանոյ, Բէշինա, Ս. Պէնէտէզզոյ և Սորա կործանեցան, 50000ի մօտ մարդիկ փլատակներու տակ թաղուեցան, եւ նոյնքան ալ վիրաւորուեցան: Ցնցումները երբեմն կարճ կը տեւեն երբեմն երկար: Բայց որչափ կարճ ալ տեւեն, կրնան մեծամեծ վնասներ պատճառել: Կան որ ամիսներով, տարիներով կը շարունակեն, բայց այս պարագային իրենց ազդեցութիւնը նուազ կ'ըլլայ: Երբեմն գետինը կը ճեղքուի և այնպէս կը մնայ կամ նորէն կը փակուի՝ վրան գտնուող բնակարանները, դաշտերը եւայլն կու տալէ յետոյ: Այս ճեղքերը առ հասարակ կրնան ունենալ երկու հազարամէղր երկայնութիւն, 10 մէղր լայնութիւն և 40 մէղր խորութիւն: Շէնքերը առ հասարակ կը փլչին կամ լոկ կը ճեղքուին, երբեմն ալ հիմնովին օդին մէջ կը նետուին իբրեւ ականի մը պայթումէն: 1797ին Ռիոյ-Պամպայի բնակիչներուն մարմինները 100 մէղր բարձր բլրակի մը վրայ նետուած գտնուեցան:

Երկրաշարժի ատեն գետինն տակէն մերթ որոտումի պէս, մերթ երկաթի բեկորներուն կճռտոցին կամ խշռտոցին պէս ձայներ կը

լսուին, աղբիւրներու ջուրերը կը տաքնան, յաճախ կազ, շոգի և բոցեր վեր կը պոռթկան: ասոնց կը միանան երբեմն յանկարծական մշուշներ, հովեր եւ անոշ փոթորիկներ, երբեմն ալ ցեխի եւ աւաղի ժայթքումներ:

Երկրաշարժի ցնցումները շատ անգամ լեռնաշղթայի մը, ծովափի մը կամ գետափի մը ուղղութեամբ մէկ գծի վրայ կը տարածուին հեռզնեռէ: շատ անգամ ալ մէկ կամ մէկ քանի կեդրոններէ շուրջանակի կը ծաւալին եւ երթալով իրենց ուժգնութիւնը կը կորսնցնեն: Երբեմն ալ ուղիղ գծի մը վրայ միաժամանակ տեղի կ'ունենան:

Նշանաւոր երկրաշարժներ պատահած են 526ին Միջերկրականի ափերուն վրայ, ուր 120000էն մինչեւ 200000 հոգի կորսուեցան: 1693ին Սիկիլիոյ մէջ, 600 մեռեալ: 1755ին Լիսպոնի մէջ, 30000 մեռեալ, 1819ին Ինդոս գետին տեղաշարժի մէջ: 1837ին Շիլիի մէջ: 1846ին Ռէնի նահանգներուն մէջ: 1848ին Կորնթոսէն մինչեւ Վինետիկ: 1854ին Սիմոտայի մէջ (Ճաբոն): 1850ին Հոնտուրասի մէջ (մէկ շաբթուան մէջ 108 ցնցում), 1866ին Սանտուիչ կղզիներուն մէջ (4000 ցնցում մարտ ամսուն): 1905 ապրիլ 4ին, Հնդկաստանի մէջ: 1906 ապրիլ 18ին Սան Ֆրանչիսկոյի մէջ, 1908 Դեկտեմբեր 28ին Մեասինայի մէջ են: ևն:

Երկիրս գրեթէ միշտ ցնցումներու ենթակայ է, ինչպէս ցոյց կու տայ շարժապիւր գործիքը (sismographe), բայց բարեբախտաբար քիչ անգամ այս ցնցումները բուն երկրաշարժի կը փոխուին, կամ այսպէս ըսենք, մեղի զգալի ըլլալու կամ աղէտներ յառաջ բերելու աստիճան կը սառնականան: Շարժապիւրը ցոյց կու տայ սաստնումներուն ոչ միայն ուժգնութեան աստիճանը, այլ նաեւ անոնց կողմը և հեռաւորութիւնը: Շարժապիւրն քաշած գիծերը բնաւ ուղիղ չեն, այլ միշտ աւելի կամ նուազ օձապտոյտ: Այս գիծերուն մանրադնին քննութենէն շատ շահեկան հետեւութիւններ հանուած են երկրագունդին ներքին կազմութեան մասին և այնպէսով մեծապէս դիւրինցեր է երկրաշարժի պատճառներուն ուսումնասիրութիւնը: Հասկցուեր է

զոր օրինակ, որ մեր մոլորակին հաստատուն կեղեւը շատ շատ 50 կամ 60 հազարամէդր թանձր է. իսկ ներօդին կազմուած է բոլորովին հրեղէն նիւթերէ:

Արդէն վաղուց զիտուած է որ գետնի ջերմութիւնը կ'աւելնայ խորութեան համեմատութեամբ. Երկրիս երեսէն քանի մը մէդր վար սահման մը կայ ուր բարեխառնութիւնը անփոփոխ է միշտ և տարուան միջին բարեքրեխառնութեան աստիճանին կը համապատասխանէ. Եթէ գետնը փորելով վար իջնենք ուղղակի, կը տեսնենք թէ ամէն 30 կամ 35 մէդր միջոց կտրելուս, բարեխառնութիւնը մէկ աստիճան կ'աւելնայ. այս միջոցը կ'ըսուի երկրաջերմական աստիճան. Յարգ կարելի եղեր է մինչեւ երկու հազարամէդր խորութեամբ փորել գետինը և ջերմութեան յաւելման օրէնքը մինչեւ այն ցեղ ստուգուեր է:

Արդ այս օրէնքին համեմատ 70 հազարամէդր խորութեան մէջ կ'ունենանք 2,000 աստիճան ջերմութիւն, որուն առջեւ ամէն տեսակ ժայռեր եւ մետաղներ կը հալին, կը հեղկանան. Այս կէտէն սկսեալ մինչեւ 300 հազարամէդր խորութեամբ երկրիս մակերեսէն վար, նիւթը տեսակ մը խիւսային հոսանստութիւն ունենալու է, որուն նման բան մը չունինք բնաւ աչքի առջեւ, որովհետեւ աշխատանքներու մէջ կարելի չէ սրտադրել այն բուռն ճնշումը և այն ահագին ջերմութիւնը, որոնց ենթարկուած է նոյն նիւթը. Իսկ 300 հազարամէդր խոր խաւէն վար մինչեւ իբր 6,350 հազարամէդր խորութիւն ունեցող կէտը, ուր է երկրիս կեդրոնը, ջերմութիւնը այն աստիճան սաստիկ է որ նիւթը հակառակ սոսկալի ճնշման մը ենթարկուած ըլլալուն, չի կրնար կազային վիճակէն տարբեր հանգամանք մը ունենալ:

Երկրագունդին այս կազմութիւնը աչքի առջեւ ունենալէ յետոյ, դիւրին է բացատրել երկրաշարժին պատճառները:

Երկրիս հրեղէն կորիզը, բնական անփոփոխ օրէնքի մը համեմատ, հեազհետէ իր ջերմութիւնը կեղեւին կը հաղորդէ և կը փոքրանայ. եւ Վեպեւը կամաց կամաց մեծ

գալով, կը սկսի իր ծանրութեամբը վար իջնել, ամփոփուել՝ կորիզին կորուսած ծաւալին տեղը լեցնելու համար. և ահա ասկէ կը ծագին երկրաշարժին ցնցումները և անոր յառաջ բերած երեւոյթները. Երբ երկրիս կեղեւը այսպէս վար կ'իջնէ, յայտնի է թէ իր մէջ յառաջ կու գան այլեւայլ պատահուածքներ, ճեղքեր, տկար գիծեր, տկար կէտեր, որոնք կորիզին վերամուղ ճնշումներուն չկարենալով դիմանալ, շատ անգամ ահեղ երեւոյթներով կը բարձրանան և բլուրներ, լեռներ, լեռներու շղթաներ և կղզիներ կը կազմեն. երբեմն ալ կը բացուին և ծնունդ կու տան հրաբուխներու:

Երկրաշարժները յառաջ կու գան նաեւ ստորերկրեայ կազերու պայթումէն. 200 եւ 300 հազարամէդր խոր խաւերու մէջ, հոն, ուր ներքին նիւթը փոփոխման մէջ է, ամէն վայրկեան կը գոյանան կազային գանգուածներ, որոնք կեղեւին մէջ կը թափանցեն եւ իրենց բնական կամ քիմիական վիճակը կը փոխեն. Արդ տարրաբանութիւնը կը սորվեցնէ թէ այս փոփոխութիւնը չի կրնար տեղի ունենալ առանց պայթումի եւ բուռն բախւելի:

Օրինակի համար յիշենք ջրին կազմութիւնը. Ակիզքը թթուածինի եւ ջրածինի խառնուրդ մըն է. կայծ մը մօտեցածին պէս կը բաղադրուին երկուքը և բուռն պայթիւն մը յառաջ կը բերեն:

Երկրիս ներսն ալ վիճակի փոփոխութիւններն ու բաղադրութիւնները նոյնպէս տեղի կ'ունենան. Թամման փորձով հաստատուեր է թէ շատ գոյացութիւններ առանց բուռն բախւելի չեն կրնար հեղկանալ կամ պնդանալ, մանաւանդ երբ իրենց մօտ գտնուող նիւթերուն հետ կրնան քիմիապէս միանալ և նոր մարմիններ բաղադրել. Այս ալ ուրեմն երկրի ցնցումներուն գլխաւոր աղբիւրներէն մէկն է:

Երկրաշարժի մեծ պատճառներէն մին է նաեւ արեւը, որ, ինչպէս դիտած են խորագին աստղաբաններ, իր վրայ երեւցող բիծերուն աւելնալուն կամ նուազելուն համեմատ աւելի կամ նուազ կ'աղղէ

երկրիս կեղեւին վրայ ելեկտրական հոսանք-
ներով, Երբ մթնոլորտին մէջ արեւէն եկած
ելեկտրական հոսանքը առատանայ՝ երկրիս
կեղեւը կ'ընդարձակուի, կը լայննայ և ներ-
սի հեղուկ կամ կազային կորիզէն իրր վեր
կը կենայ եւ զայն ուժգնակի ճնշելէն՝ կը
զադրի. որով եւ նոյն միջոցին ցնցումները
կը կորսնցնեն իրենց սաստկութիւնը. Երբ,
ընդհակառակն, արեւուն ելեկտրական հո-
սանքը մթնոլորտին մէջ նուազի, երկրիս
կեղեւը կծկուելու պէս կ'ըլլայ, կ'ամփոփուի.
կորիզին վրայ աւելի ուժգնութիւն կը յենու, կը
ճնշէ, եւ կորիզին վերեւը զանաւոր զան-
գուածները կը ձգտին անել թափով դուրս
խուժելու, կը բախեն սաստկօրէն զիրենք
արդեւոր կեղեւը, կը ցնցեն զայն եւ տեղ
տեղ ծակելով դուրս կը ժայթքին վիթխարի
հոսանքներով. Ասոր համար երկրաշարժը
տեղի չ'ունենար կամ շատ տկար կ'ըլլայ ա-
մառը և կէսօրէն վերջը, ուր արեւուն ելեկ-
տրական հոսանքը յորդութեամբ կը կուտակ-
ուի երկրիս վրայ. ընդհակառակն, ձմեռը եւ
կէս գիշերէն յետոյ, որ միջոցին նոյն ելեկ-
տրական հոսանքը կը նուազի, երկրաշարժի
ցնցումները կը սաստկանան:

Պիտի գայ ժամանակ մը, կ'ըսէ Գեր. Տէր
Մորէօ Պուրթի ղրտարանին տեսուչը, պիտի
գայ ժամանակ մը, ուր երկրիս կեղեւը այն-
չափ պիտի թանձրանայ որ այլ եւս չպիտի
ընդարձակուի արեգակնային ելեկտրակա-
նութեան զօրութեամբ, այլ միշտ պիտի ծան-
րանայ ներքին կորիզին վրայ. Այն ատեն
տակաւ աւելի պիտի խտանան և աւելի ձգ-
տականութիւն ստանան կապերը որոնք ամ-
փոփուած են այն աւազանին մէջ, որմէ չըն-
չին կեղեւով մը միայն անջատուած ենք:
Այն ատեն զարուրելի, համայնակործան սա-
սանութիւններ և հրաբխային ժայթքումներ
տեղի պիտի ունենան. և երկիրս իր արքան-
եակին պէս, անկենդան, աւերեալ, տխուր
կերպարանք մը պիտի առնու:

ԱՐՁԱՆ

ԿԱՐԴԻՆԱԼ ՆԻՒՄԸՆ

ԳԵՐՈՆՏԻՈՍԻ ԵՐԱՁԸ

Գերոնտիոսի երազը զոր եբրեւ թերթօն Արձա-
գանգի այս թիւով հրատարակելու կը սկսինք, եր-
կանիւրած է հռչակաւոր Նիւմըն կարդինալը, ան-
ցեալ դարուն ամենէն իմաստուն անգղիացին: Նիւ-
մըն ծնաւ 1801ին Լոնտոնի մէջ, 1845ին իր երկա-
րատեւ եւ խորաքնին ուսումնասիրութիւնն ստիպ-
ուած՝ թողուց բողոքականութիւնը, որուն պաշ-
տօնեաներէն էր, եւ մտաւ կաթոլիկէ Սկեղեցւոյ
ծոցը եւ այնուհետեւ մինչեւ իր մահը զբով եւ
խօսքով կուսեցաւ բողոքական աղանդներու մո-
լորութեանց դէմ: Իր դարձը դարդուեցող անկիւ-
զանութեան հիմերը եւ դըրդեցող ամբողջ մտա-
ւորական աշխարհը: Շատ նշանաւոր անձն իր օրի-
նակին հետեւեցան: 1879ին կարդինալութեան ան-
դուգական պատուին բարձրացաւ ի վարձ Սկեղեց-
ւոյ մատուցած անգղական ծառայութիւններուն:

Ինք Անգղիոյ մէջ իննեւտասներորդ դարուն
առաջին գրագէտն ու դասական մատենագիրը ե-
ղած է:

Գերոնտիոսի երազով կարդինալ Նիւմըն ժամա-
նակի եւ յաւերտնականութեան միջեւ ձգուած վա-
րագըրը մէկ դի կ'առնու, ցոյց կու տայ այն տե-
սարանները որ կը պարզուին երբ հոգին կը մեկնի
աշխարհէ եւ երանական տեսութեան կ'արժանա-
նայ: Այնքան վսեմ եւ գեղեցիկ ոճով գրուած է
այս երգը եւ այնքան զեղուն է աստուածաբանա-
կան եւ հոգեբանական բարձր վարդապետութիւննե-
րով եւ քերթողական սքանչելի դրուագներով, որ
իրաւամբ իր տեսակին մէջ առաջնակարգ տեղ մը
կը գրաւէ: Տանդէի աստուածային կատակերգու-
թիւնէն յետոյ:

Բայց ամէն բանէ աւելի այս երկին մէջ կը
փայլին հոգին կազդուրող, լուսաւորող, առաքինի
ըլլալու, մեղքէ խորշելու խրախուսող կրօնական
ճշմարտութիւններ, զորոնք մեր ընթերցողներուն
յիշեցնելու եւ անոնց մտքին մէջ անջնշ կերպով
դրոշմելու համար միայն կը հրատարակենք այս
թարգմանութիւնը:

Ա.

ԳԵՐՈՆՏԻՈՍ

Թիո՛ւն, Մարիա՛մ — Մանուանո ժամը
մօտ է. և դուք զիս կը կանչէք. կը զգամ:
Այսպէս կ'ըսէ ինձի՝ ո՛չ հեւատալաւ շունչս,
ո՛չ սրտիս ցրտութիւնը, ո՛չ ճակտիս քրտին-
քը

— (Թիո՛ւն, գրա՛ւ, Մարիա՛մ, աղօթե՛ ինձի
հաւաւր) —

այլ սա նոր ազդեցութիւնը զոր առաջին սն-
գամ կը զգամ

(— Հն՛սս եղիւ, Տէ՛ր, հոգեվարքիս առնէն:—
սա ազդեցութիւնը, կ'ըսեմ, որ ես կը մեռ-
նիմ, այլ եւս չկամ: Սա տարօրինակ եւ ներ-
քին լքումը,

(— Հոգիներո՛ւ սիրահար, — ո՛վ Աստուծոյ,
— դեպի քեզի կը նայիս:—
սա զիս ապրեցնող, բնական եւ կազմիչ ու-
ժերու իւրաքանչիւրին սպառնումը:

Ո՛վ բարեկամներ, ինծի համար աղօթե-
ցէ՛ք. այցելու մը զրանս առջեւն է. իր սոս-
կալի ազդարարութիւնը կ'ուզղէ ինծի. այ-
ցելու մը, որուն պէս անհնկէց եւ զարհու-
րելի մէկը երբեք չէ ներկայացած:

Մահն է, — սիրելի՛ բարեկամներ, ձեր
աղօթքները:— Ա՛ն է

Իբրեւ թէ էութիւնս իսկ կը քայքայուի—
իբրեւ թէ այլ եւս գոյացութիւն մը չեմ եւ չեմ
կրնար ո՛չ բանի մը յենուլ ո՛չ ալ ասղին ան-
դին դառնալ:— Իբրեւ թէ հարկ է որ ես
կորսուիմ, եւ տիեզերքէն անհետ ըլլամ եւ
իմամ այն անկերպարան եւ անսահման ան-
դունդին մէջ, — այն բացարձակ ոչնչութեան
մէջ, ուսկից ելած եմ: Ահա՛ ներսի դիս ան-
ցած դարձածը:

Ի՞նչ արհաւիրք, ահա՛ եղելութիւնը, սի-
րելի՛ բարեկամներ, ահա՛: Օ՛ն, աղօթեցէ՛ք
ինծի համար, բարեկամներ. ինծի համար,
որ աղօթելու ուժ չունիմ:

— Օգնութիւն, Տէ՛ր մարդասէր: Դո՛ւն իմ
միակ ապաստանս, դո՛ւն:—

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Տէ՛ր, ողորմեա՛ց, Բրիսսա՛ս, ողորմեաց, Տէ՛ր
ողորմեա՛ց:

Սրբուհի՛ Մարիամ, աղօթէ՛ իրեն համար:
Ամէն սուրբ հրեշտակներ, աղօթեցէ՛ք ի-
րեն համար:

Արդարներու գունդեր, աղօթեցէ՛ք իրեն
համար:

Սուրբ Աբրահամ, աղօթէ՛ իրեն համար:

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ, սուրբ Յով-
սէփ, աղօթեցէ՛ք իրեն համար:

Սուրբ Պետրոս, սուրբ Պօղոս, սուրբ Ան-

դրէաս, սուրբ Յովհաննէս, աղօթեցէ՛ք իրեն
համար:

Սուրբ Առաքեալներ եւ սուրբ Աւետարա-
նիչներ, ամէնքնիդ, աղօթեցէ՛ք իրեն հա-
մար:

Մեր Տիրոջ սուրբ հրեշտակները, աղ-
թեցէ՛ք իրեն համար:

Սուրբ Անմեղ Մանուկներ, աղօթեցէ՛ք
իրեն համար:

Սուրբ Մարտիրոսներ, սուրբ Խոստովա-
նողներ, սուրբ Ծգնաւորներ, սուրբ Կոյսեր,
Աստուծոյ սուրբերը, ամէնքնիդ, աղօթեցէ՛ք
իրեն համար:

ԳԵՐՈՆՏԻՈՍ

Ո՛ւժ առ, ո՛վ նուազեալ հոգիս, առնա-
բա՛ր գործէ. եւ ապրելու եւ խորհելու համար
քեզի մնացած կարճ վայրկեաններուն մէջ
Աստուծոյդ առջեւը ելլելու պատրաստուէ՛:
Ներսիդիդ տեղի ունեցած հանդարտութենէն
օգո՛ւտ քաղէ, մինչեւ որ քայքայուի աղ-
դեցութիւնը, զոր արդէն զգացիր, դարձեալ
քեզ ընկճէ:

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Ողորմած եւ բարի՛ եղիր. ինայէ՛ իրեն,
Տէ՛ր:

Ողորմած եւ բարի՛ եղիր, Տէ՛ր, ազատէ՛
զինքը:

Իր անցեալ մեղքերէն եւ քու բարկութե-
անէդ, ազատէ՛ զինքը:

Վերջին ժամուն վտանգներէն, մեղքի ա-
մէն հաճոյքէն, աստուածութեանցութենէ, մահ-
ուն ժամուն յանձնապատասխանութենէ, ա-
զատէ՛ զինքը, — Յաւիտեական կրակէն,
ամէն չարէ, զեւին իշխանութենէն, հիմայ
եւ միշտ ազատէ՛ քու ծառադ:

.
Բու Մնունդովդ եւ Խաչովդ. վերափրկէ՛
զինքը յաւիտեական կորուստէն. քու մա-
հովդ եւ թաղումովդ, ազատէ՛ զինքը վախ-
ճանական անկումէն. քու յարութեամբդ եւ
համբարձումովդ եւ Սուրբ Հոգւոյն շնորհաձիթ
սիրովդ, փրկէ՛ զինքը վերջին ժամուն:

ԳԵՐՈՆՏԻՈՍ

Սո՛ւրբ հօր, սուրբ Աստուած,
ի խորոց աղաչեմք զքեզ,

Ողորմեա՛, Դատաւո՛ր իմ,

Խնայեա՛ ինձ, Տէ՛ր:

Հաստատապէս կը հաւատամ, Սուրբ Եր-
րորդութեան Խորհուրդին և միակ Աստուծոյ .
— կը հաւատամ որ Աստուծոյ Որդին մեր
մարդկային մարմինը առաւ . — այս խաչուած
Մարմնոյն վրայ բացարձակ յոյսս և վստա-
հութիւնս կը հաստատեմ . — և որովհետեւ
Որդին ինծի համար ինքզինքը մահուան մատ-
ներ է, կ'ուզեմ անհետ ընել սրտէս ինչ որ
հակառակ է իր սուրբ օրէնքին:

Իրմէ և իրմէ միայն կը բխին կեանք, լոյս,
և զօրութիւն, — իրմէ, Հզօրէն և Սուրբէն,
զոր միակ և գերագոյն սիրով կը սիրեմ:

Սո՛ւրբ հզօր, սո՛ւրբ Աստուած,

Ի խորոց ազաչեմ զքեզ,

Ողորմեա՛, Դատաւո՛ր իմ,

Խնայեա՛ ինձ, Տէ՛ր:

Եւ իր սիրոյն համար միայն, կը մեծարեմ
Ս. Եկեղեցին, իբրեւ իր գործը, և անոր
վարդապետութիւնները, իբրեւ իրենները:
Ուրախութեամբ կ'ընդունիմ, ինչ որ այս ժա-
մուն կրնայ զիս տառապեցնել, ըլլայ ցաւ
ըլլայ երկիւղ, և կամքիս ամբողջ ուժովը կը
խորտակեմ զիս այստեղ պարաւանդող կա-
պերը:

Երկնային բանակին հետ, և նոյն բանա-
կին միջոցաւ, թո՛ղ առ յաւէտ երկրպագու-
թիւն մատուցուի երկնի և երկրի Աստու-
ծոյն, Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյն:

Սուրբ հզօր, սո՛ւրբ Աստուած

Ի խորոց ազաչեմք զքեզ

Ողորմեա՛, Դատաւո՛ր իմ,

Ի տաքնապի մահուան:

Ա՛լ չեմ գիմանար. — նորէն կու գայ այն
քայքայումի զգացումը, որ ցաւէն աւելի տա-
ժանելի է, այն ժխտումը և այն իմ մէջս
մարդը կազմող տմէն բանի չարատանջ խոր-
տակումը: — Իբրեւ թէ կախուած եմ սեպ
և անվերջ զառիթափի մը գլխաւորոյոյ ծայ-
րէն. — կամ աւելի գէշ, իբրեւ թէ կ'իյնամ
միշտ դէպի վար, ստեղծուածներու մէջէն,
և անհրաժեշտօրէն պարտաւորուած եմ հետ-
զհետէ աւելի մխրճելու, սուղուելու լայ-
նափնեկ անդունդին խորքը: Դեռ աւելի

զժնդակ, կը սկսի հոգւոյս վրայ տիրել ան-
դոհական սարսափ մը, տաղնապ մը, եւ,
գեռ աւելի տաժանելի, մարմնաւոր, չարա-
շունչ կերպարանք մը, կը թռչտի օդին մէջ,
պժպոյի անէծքներով կ'ապականէ զայն և
զիս ինծմէ՝ դուրս կը հանէ՝ ինծի ազդած նող-
կանքով և զարհուրանքով:

— Օգնութիւն, ո՛վ Յիսուս, Աղօթէ՛
ինծի համար, ո՛վ Մարիամ, աղօթէ՛:

Դրկէ՛ ինծի, ո՛վ Յիսուս, հրեշտակ մը,
նման անոր որ օգնեց քեզի քու հոգեվարքիդ
ատեն:

Մարիամ, աղօթէ՛ ինծի համար: — Յով-
սէֆ, աղօթէ՛ ինծի համար: — Մարիամ,
աղօթէ՛ ինծի համար: —

ՆԵՐԿԱՆՆՐԸ

Ազատէ՛ զինքը, ո՛վ Տէ՛ր, իր մահաբեր
փորձութեան ժամուն, ինչպէս ասեղնով փրո-
կեցիր այնքան հոգիներ քու զօրութեամբդ և
չնորհքովդ: —

(Ամեն)

Ինչպէս զերծ կաշուցիր Ենովքն ու Ե-
զիան մահկանացու հասարակ ճակատագրէն,
ազատէ՛ զինքը:

(Ամեն)

Ինչպէս պաշտպանեցիր Նոյ Նահապետը,
զանիկայ փրկարար տապանին մէջ դնելով,
ազատէ՛ զինքը:

(Ամեն)

Ինչպէս հանեցիր Աբրահամ Նահապետը
հեթանոս աշխարհի ընդհանուր մեղապար-
տութենէն, ազատէ՛ զինքը:

(Ամեն)

Ինչպէս փրկեցիր Յոբը, բաղձապատիկ և
սոսկալի փորձութիւններէ, ազատէ՛ զինքը:

(Ամեն)

Ինչպէս պաշտպանեցիր Իսահակը, երբ
հօրը դանակը բարձրացաւ զայն մորթելու
համար, ազատէ՛ զինքը:

(Ամեն)

Ինչպէս հանել տուիր Դովտը Սողոմէն, որ
անօրէնութիւններուն համար այրելու դա-
տապարտուած էր, ազատէ՛ զինքը:

(Ամեն)

Ինչպէս հանեցիր Մովսէսը գերութեան և

յուսահատութեան երկրէն, ազատէ՝ զինքը՝
(Ամեն)

Ինչպէս պաշտպանեցիր Դանիէլը սովա-
լլուկ առիւծներու գութին մէջ, ազատէ՝ զինքը՝
(Ամեն)

Ինչպէս յափշտակեցիր երեք մանուկները
հնոցին բոցերէն, ազատէ՝ զինքը՝
(Ամեն)

Ինչպէս զերծ պահեցիր ողջախոն Շուշա-
նը զրպարտութենէ և ամօթէ, ազատէ՝ զինքը՝
(Ամեն)

Ինչպէս փրկեցիր Դաւիթը Գողիաթի ձեռ-
քէն և Սաուլի բարկութենէն, ազատէ՝
զինքը՝
(Ամեն)

Ինչպէս բանտին մէջ երկու Առաքեալնե-
րուն շղթաները փշրեցիր, ազատէ՝ զինքը՝
(Ամեն)

Ինչպէս փրկեցիր Թեկղան տոնջանքներէ,
ազատէ՝ զինքը՝
(Ամեն)

Նոյնպէս, Տէ՛ր, ցո՛յց տուր հիմայ քու
զօրութիւնդ, և փրկէ՛ քու ծառադ իր մա-
հաբեր տապնապի պահուն։

ԳԵՐՈՆՏԻՈՍ

Վերջին ժամն է։ Կ'ուզեմ ննջել, ծաւը զիս
ուժաթափ ըրաւ... Ձևագր, ո՛վ Տէր, քու
ձեռքդ

ՔԱՀԱՆԱՆ

Ե՛րբ, հոգի՛ փրստնեայ, յայտ աշխարհէ։
Ծամբա՛յ ինկիր, քրիստոնեա՛յ հոգի։ Մեկնէ՛
այս աշխարհէն։ Գնա՛ յանուն Ամենակարող
Հօր, որ քեզ ստեղծեց։ Գնա՛ յանուն կեն-
դանի Աստուծոյ Որդւոյն, մեր Տիրոջ Յիսու-
սի Քրիստոսի, որ իր արիւնը քեզի համար
թափեց։ Գնա՛ յանուն Սուրբ Հոգւոյն, որ
քու վրայ լիջաւ։ Գնա՛ յանուն Հրեշտակնե-
րուն եւ Հրեշտակապետներուն, Աթոռներուն
եւ Տէրութիւններուն, Իշխանութիւններուն
եւ Զօրութիւններուն, Քերթէներուն եւ Սե-
րտէներուն։ Գնա՛ յանուն Նահապետներուն
եւ Մարգարէներուն, Առաքեալներուն եւ Ա-
ւետարանիչներուն, Մարտիրոսներուն և իմս-
տովանողներուն, Մենակեացներուն, ձգնա-

ւորներուն եւ Կոյսերուն։ Գնա՛ յանուն Աս-
տուծոյ բոլոր Սուրբերուն, այրերուն և կի-
ներուն։ Շարունակէ՛ ընթացքդ։ ո՛ւր էր թէ
հանգչէիր այսօր խաղաղութեամբ, Սրտի
սուրբ լերան վրայ, յանուն մեր Տիրոջ Յի-
սուսի Քրիստոսի։

Թարգմանեց ԱՐՁԱՆ

(Շարունակելի)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Հոռոմի
թերթերը կը հաստատեն թէ Սրբազան Քա-
հանայապետը ի նպաստ հաշտութեան նոր
գիտութեան ըրած է, Ն. Սրբութիւնը այս մա-
սին Գերմանիոյ հարցում ուղղած է՝ դիտել
տալով թէ ինք այսօրուան պարագաները ա-
ւելի նպաստաւոր կը նկատէ հաշտութեան
համար։

* * Հոռոմ, 22. — Էգոյ տը Բարի լուր մը
հրատարակած է, զոր արտատուներ է նաեւ
Հոռոմի մէկ թերթը, իբրեւ թէ Պետական
Քարտուղար Կարդինալը յայտարարած է որ
եթէ երբեք Իտալիա պատերազմի մասնակցի,
Ս. Աթոռը իր իրաւունքներն ու ազատու-
թիւնը պահելով հանդերձ պիտի չընդդիմա-
նայ քնաւ։ Նոյն լուրը կը յաւելուր թէ Հոռոմ
քնակող բարձրաստիճան եկեղեցական մը Բա-
րիզ մեկնած է կէս պաշտօնական հանգա-
մանքով, որպէս զի Վատիկանի դիրքը բա-
ցարէ Ձրսնայի Կղերին և Կաթողիկէնե-
րուն։

Օստրֆաթորի Բոնանոյ արտօնուած է յայ-
տարարելու թէ այս լուրը բոլորովին ան-
հիմն է։

* * Հոռոմ, 22. — Ս. Աթոռին ձեռնհաս չոր-
ջանակները, առանց մերժելու Վատիկանի
ի նպաստ խաղաղութեան սպառնալի միջնոր-
դութեան մը հաւանականութիւնը, բացար-
ձակապէս կը հերքեն ձորնայի Տ'Բրալիայի այն
լուրը որ կը հաստատէ թէ Գերմանիա կը
բաղձայ խաղաղութիւն կնքել թէեւ պատե-
րազմական կացութիւնը իրեն նպաստա-
ւոր է։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ . —

Հակառակ հայ էջմ. օրաթերթերու գրգռիչ տարածանութեանց, նոր վարչական ժողովը կազմուած էր վերջնականապէս, ըստ տրամադրութեան Կառավարութեան: Որպէս զի անձի և անձի մէջ խտիր չդրուէր ոեւէ հասարակական գործերու համար, Արհիպպատիւ Տեղապահ Արքեպիսկոպոսը առաջին օրէն իսկ առաջարկած էր որ, հետեւելով եկեղեցական իշխանութեան հաշտարար ընթացքին, վերջ արուէր գծութեան, հաշտութեան մը գալով նոյն եկեղեցական իշխանութեան հետ, որ պատրաստ էր այս մասին սիրալիր ընդունելութեան: Որոշ կերպով համապատասխան չգտնելով զամենքը այս ձեւին, որ ամենէն բնականն ու բաղձալին էր, հարկ եղաւ որ Տեղապահ Արք.ը պահէր զանազանութիւն անձի և անձի մէջ, նոյն իսկ Կառավարութեան մօտ, որ արդէն ապահոված էր եկեղեցական իշխանութիւնը որ երկու կողմէ ալ պիտի առնուէին ժողովոյ անդամները: Այս պայմանաւ թոյլատրուեցաւ որ ընտրողական գործը կատարուէր այն բացառիկ մասնախումբէ, որ զՏեղապահը ընտրած էր և որ, Կառավարութենէ բխած ըլլալով, օրինաւորութիւն մը ունէր: Հակառակ Կառավարութեան պաշտօնական յանձնարարութեան, անգեղեցական տրուած չլլալով ընտրողաց թէ անպատճառ Տեղապահ Արք. է կանխաւ նշանակուած անձինք մըտնելու էին ընտրելիաց մէջ, եղած ընտրութիւնը հազիւ մէկը կ'ունենայ այդ անձինքներէն: Ասոր վրայ բնականաբար եկեղեցական իշխանութիւնը չէր կրնար իր եկեղեցական անդամները նոր վարչականը ներկայացնել և իրաւունք ունէր պահանջելու որ տրուած ապահովութիւնը իրականանայ: Կառավարութիւնն ալ յայտնապէս իրաւունք ունէր պահանջելու որ իր հրամանը յարգուէր: Ինչպէս որ պահանջեց: Հետեւաբար ընտրուած անդամներէն վերջին երկուքը կառավարութեան կողմէ դուրս ձգուելով, դարձեալ անոր հաւանութեամբ նշանակուեցան յառաջուց ընտրելի որոշուած երկու անդամներ: ապա եւ եկեղեցական իշխանութիւնը

երկու եկեղեցական անդամները անուանելով, լրացաւ ժողովը, և արհի. Տեղապահը, նախապէս Կառավարութեան հետ կարգադրելով այս ամէնը, Փետր. 26ին ուրբաթ օրը ժամը 3ին ի նիստ հրաւիրեց այս նոր վարչական ժողովը:

Սակայն մինչդեռ այսքան զիջողութիւններու վրայ բոլորովին տարբեր վերաբերում կ'ակնկալուէր, ահա միւս ութը անդամները իբր թէ օրինաւորութիւն փնտռելով պահանջ կը ներկայացնեն Արհի. Տեղապահին թէ, այդ երկու նոր անդամներու համար նոր ընտրութիւն պէտք է: Իսկ նա հաստատ կենալով այն որոշողութեան գոր ինքն առած էր Կառավարութեան նախադիտութեամբ եւ տրամաբարութեամբ, կը մերժէ այդ անիրաւ պահանջը. և այսպէսով ժողովոյ գումարումը չկրցաւ տեղի ունենալ:

Բարի կամքի տէր Կաթողիկոսայք պիտի խորհին տխրութեամբ թէ 3 տարիէն առկին ամէն ինչ ապօրինաւորապէս կատարողները այսօր ինչ իրաւունքով ապօրինաւոր կը տեսնեն այն սրամաղորութիւնը որ արդէն շատ լայն հաշտարար կերպով թողոտորուած է եկեղեցական իշխանութեան կողմէ և պատահրուած Կառավարութեան կողմէ. ուստի եւ իրենք են պատճառ որ բաղձացուած համերայիութիւնը և համաձայնութիւնը չի գոյանար, մանաւանդ կը խանդարուի. և հետեւաբար խեղճ հասարակութեանս գործերը երեսի վրայ կը մնան. և ինչպէս կ'ուզեն որ Հասարակութիւնը հիմնապէս չփնտռուի. հիմայ որո՞ւ է յանգանքը:

* * Գաւառներէն եկած անգեղեցականց համեմատ Ազգ. Սիւնհոդոսի վճիռները և կանոնները սկսած են գործադրուիլ թեմերու մէջ, և նոր տոմարը սկսած է հրատարակուիլ հոն ուր ցարդ աղեւտը պարսպաներու բերմամբ հինին կը հետեւէին:

* * Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ հովուական թուղթը, որուն մասին անցեալ թիւով գրեցինք, կիրակի օրերը սւառ թեմի եկեղեցիներուն մէջ հետդնտէ պիտի կարդացուի և ժողովրդեան մեկնուի:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՈՐԾԵՐ. — Փետրուար 25ին, առաւօտեան ժամը 10ին, թշնամի 10 զրահաւորներ կրակ բացին Տաթանէլի բերանը գտնուող ամրոցներուն դէմ: Ռմբակոծութիւնը տեւեց մինչեւ կէսօրէն ետք ժամը 5ին: Յետոյ թշնամին քաշուեցաւ դէպի Թենետոս կղզին:

Ջնութիւններով հաստատուեցաւ թէ Ա. կամմանտի ձեռով թշնամի զրահաւոր մը եւ ուրիշ երկու զրահաւորներ մնաստեալ են Ա. նատօլուի եզերքներու մեր ամրոցներուն արձակած ուժերէն:

— Այս ուժակոծութենէն մնաստեցան նեղուցին արտաքին ամրոցներուն մէկ քանի կէտերը. հինգ հոգի մեռան և 14 հոգի վիրաւորուեցան:

— Փետր. 26ին ալ թշնամի նաւատորմը ուժակոծութիւնը շարունակեց, բայց կէսօրէն յետոյ նեղուցին Աէտտիւլ Պահրի հրետանին հասողութենէն դուրս ելաւ:

* * Հիւլէն դեսպանատունը կարգ մը պահանջներ ըրած էր, յայտարարելով թէ դեսպանատան նաւային կցորդ Մ. Քրիէզիս քաղաքային ոստիկանի մը կողմէ նախատինքի ենթարկուած էր:

Նկատի առնելով երկու երկիրներու միջև գոյութիւն ունեցած բարեւոք յարաբերութիւնները եւ նմանօրինակ պարագայի մէջ գործադրուած միջազգային կանոնները, կայս. կառավարութիւնը ընդունած էր այս պահանջումները և Յունաստանի դեսպանին իմացուցած էր ընդունած ըլլալը:

Հակառակ այս մասին գոյացած համաձայնութեան, հիւլէն դեսպանը Փետր. 13ին մեկնեցաւ (Ա. Գ.).

* * Մովսիսն ուժգին յարձակումը, զոր

վերջերս Դերմանիա սկսաւ Անգլիոյ դէմ իր ընդժողիւններով, Մարտ 1ին կանոնաւորապէս պիտի տարածուի ամբողջ անգլիական ծովեզերքներուն վրայ որ պատերազմի չընաւակ նկատուած են Դերմանիոյ կողմէ, չէզոք նաւերուն չորս օր միջոց պիտի տրուի նոյն չընաւակէն ելլելու:

* * Վերջերս կարեւորագոյն լուրը որ եկաւ համաւերոպական ռազմադաշտէն՝ կը վերաբերէր Արեւելեան Բրուսիոյ, ուր Մարէշալ Հինտրնպուրկ նոր հարուած մը տուեր է թշնամիին, զայն դուրս վանելով Բրուսիոյ հողէն, ուր կը մնար պատերազմին սկիզբէն ի վեր: Իննօրեայ հսկայական այս կռիւն մէջ Ռուսներուն կորուստն է, գերման զեկոյցին համեմատ, 66 հազար զերի, 71 Թնդանթ, 100 մեքենաշարժ հրացան, եւն. թէեւ յաղթական կողմին կորուստը չէ ծանուցուած, բայց նախընթաց գերման զեկոյց մը ըսած էր թէ, որչափ ալ ծանր ըլլայ, սնահամեմատ կերպով բարձր չէ գերման զօրքերուն կրած մնասը: Կարեւորը արդիւնքն է, եւ քանի որ գերման սպարապետը կը յայտարարէ թէ գերման հողը մաքրուեցաւ թշնամիին ոտնձգութենէն, վճարուած գինը ծանր չի գար:

* * Պերլինէն կը հեռագուի թէ Գերմանիա Փետր. 12ին սկսաւ փոխանակել կրուուելու անկարող զերիները: Յրանսացի գերիները Քօնսթանու զրկուեցան, իսկ անգլիական զերիները՝ Լիէժ:

* * Մաճառ օդանաւորը մը, որ քանիցս արշաւներ կատարեց Բրզէմիսի վերեւ, կը պատմէ թէ 6,000 ռուս զերիներ կը գտնուէին այդ բերդաքաղաքին մէջ: Պաշարող զօրքերուն կը հրամայէ միշտ Զօր. Տիմիթրիէֆ: Մաճառ պահակազօրքին խուժումները միշտ գիշեր ատեն տեղի կ'ունենան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	49
Ազգ. Պատրիարքական Սրբազգայն	52
Պիտտ Ժ.	55

Երկրաւարժ.	57
Գերմանիայի Երազր	59
Տեղեկագրական	62

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎՐԱՊԱՆՏ

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Եւ. Արձագանգ Երաբարանքի. Կոստ. Պոլսում փոքր քիւ 5. Կ. Պոլսում

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արտասահ-
ման տար. Ծր. 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են.

ՀԱՍՏԷ. — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայքաւ փողոց 5, 4.

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու ե-
յօղուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խկական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4. — Ձեռագիրները ես չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է զրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայքաւ փ. 5: Տպարանս ըստ ամենա-
յի ճշիւ և ի վիճակի է, ու և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
ւակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէանք,
մահազգներ, եւն. եւն. Գիները անմեղելի կերպով աման են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մագրութեան կողմէ յաճախողները անտարակոյս զօհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Turnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. 1/2 % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.